

Ձոր ասացի առնէ սիրով,
Յօժար կամօք հետեւելով,
Նա զարդարի Հողուով Սրբով,
Քան զՎաս վառի պայծառ լուսով:

Ով ծոյլ կենայ երերալով,
Ձօրն եւ զգիշերն քուն կալով,
Եւ զորովայն պարարելով,
Շուրջ պիտի գայ ինքն լալով:

Ձրանս Աստուծոյ քամահելով,
Ձգիբըս սրբոց պարսաւելով,
Ատեցութեամբ հեռանալով,
Հողուովն այրի անչէջ հրբով:

Ձաւուրս կենաց դատարկ կալով,
Վարդապետաց պարսաւ տալով,
Ձարիացեալսն աղճատելով,
Եւ զըրարան բանբասելով:

Եւ միշտ գինով արբենալով,
Հողուով մտօք յիմարելով,
Ձար խորհրդով խաւարելով,
ՁԱստուած բընաւ մոռանալով:

Եւ զօր մահուն ոչ յիշելով,
Յիմար կուսանց նմանելով,
Բարեաց զործոց հեռանալով,
Եւ յաղօթից միշտ ծոյլ կալով:

Այլ զօրացիք դուք Աստուծով,
Եւ անդադար աղօթելով,
Ձգիրս Աստուծոյ միշտ կարգալով,
Եւ ջահ վառիք անչէջ լուսով:

Որպէս մեղու միշտ ջանալով,
Եւ քան զմըրջիմ վաստակելով,
Արթուն մըտօք յար խոկալով,
Իմաստնանաս դու Աստուծով:

Ձուրն ի վերուստ միշտ կաթելով,
Ըզմի տեղի հարկանելով,
Ձկարծըր վիմերն խորելով,
Նոյնպէս եւ դու ջանայ սիրով:

Որպէս զեղինըս լծելով,
Յերկիր ախօսըս բանալով,
Ըզպնտութիւնըն կակղելով,
Բոյսըս պէս պէս արձակելով:

Նոյնպէս եւ դու ջանայ յուսով,
Ձտիւ եւ զգիշեր վաստակելով,
Ձգիրս Աստուծոյ միշտ կարգալով
Ձխորս իմաստիցըն բանալով:

Ով որ գայս բանս երգէ սիրով,
Ուշիմ հողուով միտ դընելով,
Նա զարդարի Հողուով Սրբով,
Յորժամ որ գայ Տէր մեր ամպով:

Յորժամ որ զԿԶ տուն ներբողեանս ա-
սես, զԹոխաթցի Ստեփանոս էրէցս յիշես եւ
ձեզ եւ ինձ Հայր մեր որ յերկինս ասէք:

Է. Ն. ԱԿԻՆԵԱՆ

1531Ի ՄԵՆԿԵԹՈՂՈՎԸ ՀԵՅԿԵԿԵՆ ԳԵՒԵԹՆԵՐՈՒ ՄԷՋ ԵՒ ՄՆՂԵՐԻՍ ԳԵՐՋՆԵՐԻ

Մանկաթողովի սկզբնաւորութիւնը ոմանք
կը դնեն ԺԳ. դարու առաջին կէսին սուլթան
Օրխանի (1326—1350), ուրիշներ Մուրատ Ա. ի
(1350—1390) օրով: Համմէր իր Օսմանեան
պետութեան պատմութեան մէջ (Ա. 98) կը
գրէ¹. Գարա Խալիլ Ձէնտէրէլի, եղբայրն
Օրխան սուլթանի եւ Ալաէդդին վէզիրի, որ
բանակին դատաւորն էր, խորհուրդ կու տայ
իր սուլթան եղբոր, որ ան նոր բանակ մը
կազմակերպէ զուս զբխտոնեայ մանուկ-
ներէ: Անոնք բռնարար պիտի խաւարուէին
եւ մարզուէին զինուորական ծառայութեան
մէջ: Պարտուածները, ըսաւ, յաղթողին դե-
րիներն են. անոր կը պատկանին անոնց ինչ-
քերն եւ կիներն եւ զաւակները, իբրեւ օրի-
նաւոր ստացուածք: Եթէ մանուկները բռնի
մահմեդականացուին եւ իբրեւ մարտիկներ
պետական ծառայութեան առնուին, պիտի
շահուի անոնց թէ ժամանակաւոր եւ թէ
յաւիտենական փրկութիւնը: Մարդարէին
խօսքն է թէ ամէն նորածին կը բերէ իր հետ
աշխարհ՝ միտութիւն դէպ ի խաւաքութիւն:
Եթէ արծարծուի այդ բերումը զբխտոնեայ
մանուկներէ կազմուած բանակին մէջ, դեւ-
րին պիտի ըլլայ այնուհետեւ անոնց միջնոր-
դութեամբ խալաթութեան հրապուրել իրենց
հայրենակիցներն եւ այսպէս պիտի աճի եւ
ընդարձակուի անոնց բանակը: Առ այս
կը խորհրդածէ Համմէր. «Այս դժոխային
ծրադիրը, որ պիտի ապականէր զբխտոնեայ
մանկտին եւ պիտի նպաստէր մահմեդակա-
նութեան ծաւալումին, աննախընթաց է հին

¹ Joseph von Hammer, Geschichte des Os-
manischen Reiches. Pest, 1834, S. 96—98.

եւ նոր ժամանակներու զինուորական բռնա-
կալութեան մէջ»:

Ի սկզբան առնուեցան այն նպատակով
զբխտոնեայ զերիներու մանուկները. ապա,
սկսեալ ԺԶ. դարէն, մանկահաւաքի ենթար-
կուեցան օսմանեան պետութեան սահմաննե-
րու մէջ գտնուող զբխտոնեայ տղաք: Եր-
կու եւ աւելի տարիներ անգամ մը մանկա-
թողով կ'ըլլար պետութեան զանազան նա-
հանքներու մէջ երբ 1 առ 10 համեմատու-
թեամբ կը խլէին բռնի զբխտոնեայ ծնող-
ներէն մանչէր եւ կը յանձնուէին Կ. Պոլիս
զինուորական հրահանգանոց:

«Ենի չերի», նոր զօրք անունը ստացաւ
այս բանակը: Այս զինուորները ոչ ազգ, ոչ
հայրենիք, ոչ հայր եւ ոչ մայր կը ճանչնային.
անոնք գիտէին միայն իրենց դրօշը: Սկզբնա-
ւորութեան 1000 էր անոնց թիւը. Մահ-
մէտ Բ. ի (1451—1481) օրով բարձրացաւ 12,
Սուլէյմանի օրով՝ 20, Մահմէտ Գ. ի (1648—
1693) օրով՝ 40 հազարէ:

Գարանաղցին աւանդութենէ լսած է,
թէ Մաղաբիս վարդապետ երկրորդ անգամ
մ'ալ գացած ըլլայ Կ. Պոլիս եւ խաւանած
մանկաթողովը Դերջանի եւ Կամախի շրջա-
նին մէջ: Կը գրէ. «Եւ այլ ասն, թէ Տղայա-
թողովն, որ եղեւ ի սուլթան Սէլիմի⁽⁶⁾ ա-
ւուրսն, նա գնաց Վարդապետն ի յՍտամբուլ,
այնքան տքնութիւն արար ի դրուես արքային
եւ ժտութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց
տեսանել զերեսս արքային, մինչ ծանուցին
թաղաւորին եւ նա կոչեաց առ ինքն եւ եհարց
ցՎարդապետն. Ձի՞նչ խնդրես... ասէ Վար-
դապետն. Եթէ դաի շնորհս առաջի քո, նա
կամ է ինձ զհարգուումի (Կարնոյ) տղայ
թողվելն ինձ օժիտ այնես եւ ի տեղի դին
տղայոցն սակաւ հարկս դնես: Եւ հաճոյ
թուեցաւ թաղաւորին. հրամայեաց այնպէս
լինել: Որ կու գայր տղայոց թողովն մինչ ի
Սեւաստ եւ անդից դառնայր եւ ոչ գայր ի
մեզ: Եւ զիտեմք որ երեք տարին անգամ մի
կու գայր հարկահանն տղայթողովին, որ
օղլանջի ստակ ասէին: Եւ ի ժամանակն սուլ-
թան Մուստաֆային, որ տղայթողով ելաւ՝
ի թվին Ռ. Հ. (1623), որ ամէն աշխարհք ժո-
ղովեցին, գնացին որ ի Թէրոպոլիսի վա-
չալին այլ բռնութեամբ թողվին. աղօ-
թիւք վարդապետին մեծին Մաղաբիսն զօրա-
ցեր էր [յ]Ապազան եւ չեթող մտանել յեր-
կիրն, այլ հալածական արար» (անդ, էջ 339—
341):

Այս աւանդութիւնը հասած է նաեւ Երե-
միա Չէլչպիի սկանջը զբաւոր աղբիւրէ մը:
Հ. Ղ. Ինճիճեան Մանկաթողովի մասին խօ-
սելով կը գրէ. «Յետ ժամանակաց ինչ պա-
տուէր եղաւ զբխտոնէից հպատակաց, ի
10 արու մանկանց զմին տալ արքայի ի զի-
նուորութիւն. որով զեղծեալ բազում ան-
գամ՝ մանկունս յախշտակէին ի տանէ հօր
իւրեանց ի մարդահարկ: Չայս մանկաթողով
յաւուրս Ա. Սուլթան Սէլիմի սահմանեալ
ասէ Երեմիա Չէլչպի. որ եւ թուէ զժողո-
վելն նոցա ըստ կարգի թուականաց: Նախ ի
1517 յաւուրս Ա. սուլթան Սէլիմի. Բ. ի 1519.
Գ. ի 1531 յաւուրս Ա. սուլթան Սիւլէյմանի.
Գ. ի 1549. Ե. ի 1590 յաւուրս Գ. սուլթան
Միւրատայ. Զ. ի 1622. յորում ժամանակի
թաղաւորէր ոչ Բ. սուլթան Օսման որպէս դնէ
նա ինքն, այլ սուլթան Մուստաֆա կրկին
թաղաւորեալ. յայնմ ժամանակի բերին ի
Հայոց եւ ի Պօշնազաց Յունաց՝ վեց երամս
ի Ռումէլիէ, եւ երիս երամս յԱնատօլուէ.
Իւրաքանչիւր երամք 110 մանկունք... է. ի
1638 յաւուրս Գ. սուլթան Միւրատայ:
Ը. ի 1668 յաւուրս Գ. սուլթան Մէհմէմէտի:
...Եւ որպէս պատմէ անդէն, Դերջանցի
Մաղաբիս վարդապետն ի 1543 էառ ի Ա.
սուլթան Սիւլէյմանայ Խաղիլչէրիֆ այսինքն
Հրովարտակ, մի առնել մանկաթողով ի Բա-
բերդ եւ ի Դերջան, որով բարձաւ, ասէ,
րեւոյք եւ ի Դերջան, որով բարձաւ, ասէ,
յայնք ի սուլ. Սիւլէյմանայ առեալ էին խաղ-
վելչերիֆ. բայց որպէս ցուցանեն յետագայ
գիպուածք՝ չեղեն լսելի այն հրովարտակը:
Մանկունք այսպէս թողովեալք, ի զարգա-
նալն իւրեանց՝ ոչ ճանաչէին ոչ զձեռքս եւ ոչ
զհայրենիս, այլ միայն զդրօշակ իւրեանց²»:

Նոյնը կը հաստատու Առաքել Դաւրի-
ժեցի, իր համառօտ ժամանակագրութեան
մէջ. «ՁԳ (1543). Մաղաբիս վարդապետն
Դերջանցի գնաց առ սուլթան Սուլէյմանն, եւ
վերացոյց զտղայ թողվելն հրամանաւ նորին
ի Դերջանայ եւ ի Բարբերդու³»:

Երեմիա Չէլչպի Մաղաբիսի երթն
Կ. Պոլիս առ Սուլէյման Ա. կը նշանակէ
1543ին. ուստի երկրորդ անգամ նոյն ճանա-
պարհը ըրած է ան: Այս լիով կը համապա-
տասխանէ ժամանակագրութեան, այնու որ

² Ինճիճեան, Օսմանեան տէրութիւն որ յերո-
պա, վենետիկ 1804, էջ 63 (Աշխարհագրութիւն չո-
րեց մասանց աշխարհի, Ե. 2):
³ Պատմութիւն, Վարդաշապատ 1896, էջ 582—
583:

Մաղաքիա վախճանած է 1545ին: Թէպէտ չունինք ժամանակակիցի մը վկայութիւնը, բայց Գրիգոր Գարանաղցոյ, Առաքելի եւ Երեմիայի վկայութիւնները չենք կրնար մեր-տել:

Հայ պատմագիրներու եւ Յիշատակագիրներու քով առաջին անգամ կը յիշուի Մանկաժողովը 1531ին: Այս տարւոյ համար իմանալու է ինչ որ կը գրէ Չամչեան (Գ. 512/3). «Սուլտան Սուլէյման իրրեւ դարձաւ ի Կոստանդնուպօլիս, խորհրդով եպարքոսին իւրոյ Իպրահիմ փաշայի հրամայեաց ժողովել զմանկունս ի Հայոց, ի Յունաց եւ յայլոց ազգաց. եւ որք ժողովէին՝ բռնութեամբ յափշտակեալ զնոսա ի ծնողաց իւրեանց, տանէին ի պալատն արքունի, եւ դարձուցանէին զնոսա ի կրօնս իւրեանց. եւ սաստկացաւ դառնութիւն ողբոյ եւ կոծոյ հարց եւ մարց յամենայն տեղիս. եւ գրեաց ի վերայ այսր ի նմին ժամանակի ողբական բանս ոտանաւորաց Թաղէոս վարդապետ Սերաստացի»:

Այս Ողբը հասած է մեղի, բայց անանուն: Ստորեւ կը ներկայացնեմ զայն ամբողջութեամբ: Ողբէս այն տպաւորութիւնը կ'աւնենմ, թէ առաջին մանկաժողովն է այս հայկական դաւաճաններէն: Ողբին գրութեան տարին 1531 ճշդիւ կը համապատասխանէ Երեմիա Չէլպիլի ժամանակագրութեան:

Հ. Մ. Չամչեան երկրորդ մանկաժողով մ'ալ կը յիշէ 1543ին. «Յետ քանի մի ամաց դարձեալ եղև այսպիսի մանկաժողով. եւ որք վերակացուք էին այսր գործոյ՝ բազում աղետալի գործն գործէին ընդդէմ կամաց թագաւորին. խորտակէին գոռնս եւ կողոպտէին: ուրեք ուրեք այրէին եւ զեկեղեցիս. որպէս յԵւզոկիա ետունս այրել եւ քակել զուրն եկեղեցիս միանգամայն ի միում աւուր. յապրիլի 9, ի թուին Հայոց 29Բ (1593). ըստ որում աւանդի ի Տարեգրութիւնս ինչ Հայոց. եւ իրրեւ դադարէր այս աղմուկ, Մաղաքիա վարդապետ ոմն Դերջանեցի՝ այր բանիրուն՝ ել զնաց անձամբ առ սուլտան Սիւլէյման. եւ աղերս արկեալ առաջի նորա՝ ետ խափանել զժողովունս տղայոց ի Դերջանայ եւ ի Բաբերդոյ. մատնան եւ այլ ի Հայոց, եւ հաճեցուցին զթագաւորն. եւ նա հրամայեաց մի եւս այլ նեղել զոք վասն այնր բանի. բայց յետ այսորիկ եղև եւ յայլ ժամանակս բազում անգամ այսպիսի տղայաժողով» (Գ. 513): Ակնարկուած

Տարեգրութիւնը հաւանօրէն Երեմիա Չէլպիլին է:

Երրորդ Մանկաժողովի մը մասին խօսք կ'ընէ Յովհաննէս Այնթապցի գրեւ մը ի Սեբաստիա: Սա 1585ին կ'օրինակէ Միքայէլ Ասորոյ ժամանակագրութիւնը, «ի քաղաքս Սեբաստիոյ... ի մէջ դառնութեանն... զի բռնութիւնն եւ չար հրամանն թագաւորին սաստկացեալ էր ի վերայ մեր...: 2ի յայտամի առաքեաց զոմն ի նախարարաց իւրոց, որ եկն ի վերայ քրիստոնէից եւ զչար սահմանն կատարելով ի յերկիրս Սեբաստիոյ միայն երեքհարիւր մանկունս ժողովեաց. եւ արձակեալ ընդ ամենայն տեղիս զնոյն առնէր ի վերայ քրիստոնէական տոհմից: Բայց ես եղկելի գրիչս յէի (°) ըստ մանկութեանն հասակիս երբեմն փախչելով կայաք, երբեմն սարսելով...» (Էջմիածին, Թ. 1868): Այս Այնթապցոյ գրչէն է նաեւ Վիեննայի Թ. 86 (Սամուէլ Անեցոյ ժամանակագրութիւնը, յամէ 1585. Տաշեան, Յուլիոս, էջ 356). եւ պէտք չէ շփոթել զինքը աւելի երէց համանուն Այնթապցոյ հետ, որ յետոյ Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռը բազմեցաւ (Բարգէն Կաթ. Կիլիկիեան, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս 1939, էջ 202):

Թ Ա Գ Է Ո Ս Ս Ե Բ Ը Ս Տ Ե Ն Ի Ո Յ

Ողբ ի վերայ մանկանց որ գերի տարան ի քաղաքն Ստամբոլ:

Անեղ բնութիւն Աստուած Հայր ամենակալ, եւ Որդին միածին ի նմանէ ծընեալ, Կամաւ Հոգւոյն սրբոյ մարմին ըզբեցեալ, Օրէնք եւ պատուիրանք մարդկան աւանդեալ:

Որքան որդիք մարդկան գտէր Աստուած սիրեն, Զօրէնս եւ զպատուիրանս նորա կատարեն. Ի պարգեւսն Աստուծոյ նոքա վայելեն եւ զեկեալ պատուհասն յետ դարձուցանեն:

Արդ այժմ ամենեքեան յօրինաց¹ ելան, Քահանայք կրօնաւորք եւ աշխարհական. եւ զանազան մեղօք միշտ աղտեղացան, Վասն այն Մահճետականքն յոյժ զօրացան:

Յինքն հարիւր 'ւ ութսուն մեծ թըվականին Որ էր յազգիս մերում Հայոց տուժարին. Ի թագաւորութեանն պեղծ Մահճէտ ազգին, Յազգէն քրիստոնէից տըղայ խնդրէին:

¹ 2. օրինաց:

Յորժամ զայս լըսեցին յոյժ զարհուրեցան, Երկիրս Հայաստանեայց յոյժ վրդովեցան, Որդիք իւրեանց ծնողացն բաժանեցան. Գնացեալ օտար երկիր եւ յոյժ հեռացան:

Բազումք ի յանապատ տեղիս դիմեցին, Ի յայր 'ւ ի քարակերպս ժուժկալեցին. Յրտոյ եւ անձրեւոյ յոյժ համբերեցին, Յանօրինաց փրկելն յուսով խնդրեցին:

Չամէն ցընոր թողեալ եւ զայս հոգային, Զմարմնոց պէտք եւ զկարիք մոռացեալ էին, Ի սուգ 'ւ ի արտաճութիւն հանապաղ կային, Իրրեւ զալէկոծեալ նաւ ի մէջ ծովին:

Ի ժամ ձըմերային ցուրտ եղանակին Եկեալ հրամանն չար եւ առ մեզ հասին. Զամէն տըղայքն ի մի վայրս ըմբռնեցին, Բանդ եւ զընտան եղեալ զնոսա պահէին:

Եւ ի քաղաքն առեալ զնոսա տանէին, Ծընօղքն եւ աղբականքն ի հետ երթային. Լալով եւ արտասուով աղաղակէին, Եւ յուսահատութեամբ ի յետ դառնային:

Յորժամ առեալ զտղայքն եւ հաւանէին, Զհայրենական ըզդետն յանձնէն հանէին. Բերեալ այլ նոր հանդերձ ազուցանէին, Հարկանելով զծնօղսն ի բաց վարէին:

Յայնժամ վայ եւ եղուկ իւրեանց ասէին, Հող ըզգլխոջն իւրեանց առեալ ցանէին. Զեռք ի յերեսս արկեալ արիւն հեղէին. Զհերս ի վերայ որդւոց իւրեանց կըտրէին:

Ողորմազին դիմօք դանն արտասուէին, Ծընօղքն եւ աղբականքն եւ եղբարք նոցին. Մինչ զի զամենեսան ի յողբ շարժէին, Զոր ոչ կարէ պատմել լեզու մարդկային:

Սեւազգեստ լինէին քուրճ ըզգենուին, Մոխրաթաւալ անձամբ աղաղակէին. Տարակուսեալ հոգով ի տան նըստէին, Հանգուցեալ մեռելոցն երանի տային:

Եւ այս մեծ արտաճութիւն եղև ծնողաց, Զորդիս իւրեանց առեալ եւ թողին ի բաց. Լալով բաժանեցին ի յազգականաց, Օտար երկիր տարան խեղճ եւ զեզերած:

Որք ըզմըտաւ ամեն լան եւ արտասուեն, Եւ ի խորոց սրտէ իւրեանց հառաչեն. Ի յետ դարձուցանել զնոսա ոչ կարեն, Եւ կենդանոյն նոքա իրր ըզմեռեալ են:

Ոմանք օտար երկիր գնացեալ փրկեցան, Ոմանք բազում արծաթ կաշառ խոստացան. Եւ են որ վասն որդւոց զՔրիստոս ուրացան, Որրոց եւ աղքատաց բազումք մատնեցան:

Ամենախնամ աջոջն Աստուած էր ստեղծեալ, Եւ արեամբ Միածնին էր զնոսա գընեալ. Մարմնոյ սուրբ եւ արեան Փրկչին հաղորդեալ, Ոչ աղատեաց զնոսա, զի էր բարկացեալ:

Զի աւագանքն սուրբ էին մըկըրտած. Եւ Հօրն երկնաւորի որդի անուանուած² Եւ ոմանք սարկաւազ էին կարդացած, Վասն չարեաց մարդկան ոչ խնայեաց Աստուած:

Եւ զարտասուսն ասեմ տղայոց անմեղաց. Յորժամ որոշեցին զնոսա ի ծնողաց. Պաշարեցին զնոսա նըման գաղանաց, Քրիստոնեայ 'ւ այլ ազգի շարժեցան ի լաց:

Յորժամ բաժանեցին զնոսա ի ծնողաց, Անդ եղև աղաղակ մեծ կոծումն եւ լաց. Որպէս որ բաժանեն³ զգառինսն ի մաքեաց, Եւ եղև մեծ աղէտ տարակուսանաց:

Առեալ զնոսա յերկրէն իւրեանց եւ հանին, Հարկիւ եւ բռնութեամբ ի Ստամբոլ տարին, ԶՅիսուս Քրիստոս Փրկչին ուրանալ տըվին, Զմոլար օրէնս իւրեանց նոցա ուսուցին:

Եւ այս վասն այն երեկ վերայ մեր, եղբարք, Զի ոչ մընաց ի մեզ բարի զործք կամ վարք. Նախանձեցան ընդ մեզ անօրէնք եւ չարք, Վասն մեղաց մերոց մաղնեցան քրդարք:

Ոչ սուր ի թշնամեաց էր զմեզ պաշարեալ, Ոչ սով ի յԱստուծոյ էր առ մեզ եկեալ. Եւ ոչ խաղաղ մահուամբ յաշխարհէս ելեալ, Յանկարծ անօրինացն զերի մատնեալ:

Սրդ մեզ ամենեցուն պարտ է զայս ողբալ, Եւ ի խորոց սրտէ հառաչել եւ լալ. Միթէ մեզ քաղցրանայ Աստուած բարերար, Այլ ոչ մատնէ ի ձեռն ազգին անիծեալ:

Զայս ոչ էաք լըսել ի մեծամեծաց, Եւ ոչ աստուածային զբրոց մեզ պատմած. Ոչ որ ի մարդկանէ աչօք էր տեսած, Զոր վերջին ժամանակս մեզ պատահեաց:

² 2. անուած:
³ 2. զբաժանեն:

Ձի թէ հայրն Արրահամ զորդին իւր զենէր, Ձպատուէրն ի յԱստուծոյ կատարել կամէր. Եւ կամ թէ յԵփթայի ըզդուստրն իւր զենէր, Եւ զուխան ընդ Աստուծոյ եզեալ վըճարէր:

Եւ թէ երեք մանկունքն որ ի հուրն անկան, Սքանչելեօք Միածնին նոքա փրկեցան. Եւ կամ ի Բեթղէմ որ կոտորեցան, Փոխանակ Գրիստոսի նահատակեցան:

Եւ թէ սուրբ քառասունքն որ ի լիճն արկան, Լուսափայլ պըսակացն արժանի եղան. Եւ որք վասն Աստուծոյ նահատակեցան, Արքայութեանն երկնից դասակարգեցան:

Ձի թէ մանկունքն մեր նահատակած էր, Եւ կամ վասն Աստուծոյ հըրով սյրած էր, Եւ կամ նրման սըրրոցըն քարկոծած էր Ազգին քրիստոնէից տեղ պարծանաց էր:

Այս տաղէն երկու ձեռագիր ծանօթ են ինձի. Էջմիածին, Թ. 1636, թղ. 192բ—196ա (ԺԼ. դարէ) և Գեւորդեան Բաժին, Թ. 281, թղ. 242ա—244բ (ԺԵ. դար): Այս վերջինէն է Հ. Աճառեանի օրինակութիւնը, զոր ունիմ տրամադրութեանս տակ: Երկու ձեռագիրներն ալ անանուն են: Ինչպէս տեսանք վերագոյն, Հ. Մ. Չամչեան Ողբիս հեղինակ կը ճանչնար Թաղէոս Սերաստացին. նոյնպէս Ողբն «Գաւիթ արքայի որդին Սողոմոն» (մասամբ հրատարակուած՝ Հայագատում, Բ., էջ 593—594), որ ձեռագիրներու մէջ հեղինակի անուն չի կրեր, Թաղէոսի գրչին կը համարէր Չամչեան, անշուշտ հետեւելով աղբիւրի մը: Յամենայն զէպս Ողբիս ողբերգակը ականատես մըն էր 1531ին Սերաստիա կատարուած Մանկածոցովին: Այս դարու առաջին 60ամեակին ծագկած է նաև Թաղէոս Սերաստացի:

Հրատարակութեանս մէջ ուղղած եմ ինչ ինչ գրչագրական սխալագրութիւններ, և զրի անկում, յ զրի աւելագրութիւն: Այլ ընթերցուածներ նշանակուած են սարուածքին մէջ:

Հ. Ն. Արմենս

ԿՈՒՑԻՆՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
(Շարունակութիւն):

Ճառ: Վասն պատերազմի թէ որով պատճառաւ քակեց զայն ուխտն ու դաշինքն, զոր առաջն պատմեցաք հաշտութեան կարգին: Ձի թաղաւորն խոկայր և խեղայր և զելս իրացն ոչ գտանէր վասն քրիստոնէից ազգին առնելոյ զայս չափ քաղաքս և տալոյ հարկ նոցա, որ տային յամ Ենթաէի. ձի. օսկի և զայն արդել չտուր և նոքա թոյլ ետուն. և այնու չկարաց հասանել ցանկութեանն. իրենց կարգացողներէն Ֆէթիլայ ուղեց, չտուին և այնպէս վարանեալ կայր ի սրտի: Եւ եղև թվական մեր. ՌՃԾԸ. յանկարծակի յայտնեցաւ ազգ մի, որ կոչուր Շիվէտ. սայ պատերազմեր է Մոսկովու հետ և Մոսկովու առեալ զամենայն երկիր նորա, զայն անիծեալ հեռետիկոս Շիվէտին և ինքն փախուցեալ եկն երկիրն Օսմանցոց, ԽՍ. զորք աւելի կամ պակաս, և երկիրն Օսմանցոց անկաւ մահ ի վերայ նոցա և չարգեալ սատակեալ բազումս ի նոցանէ և մնացին Ժ. կամ ԺԵՌ. մինչև. Բ. տարի բովանդակ և օսմանցիքն ինամարկեալ ետուն զհարկն աւելով, թէ որովհետեւ անկար երկիրն մեր պարտիմք և մեք անկելոյն ձեռնտու լինել: Քանզի վաճառականք յուրվք երթ և եկ առնելով վերահասու եղեալ զայն և պատմէին մեզ և այլք ժողովարարք և կարհաւորք ի միջի նոցա կալով և եկեալ պատմէին մեզ: Ընդ այն ժամանակն Մոսկովին էլչի է եկեր թաղաւորին վասն այլոց իրաց և թաղաւորն սայ ևս իրիճա է արեր ասելով, իմ խաթերս համար սորա ճամբայ տաս, որ երգայ իւր երկիրն: Եւ Մոսկովին չէառ անձն ասելով, թէ իմ թշնամին իմ ձեռս տուր և Օսմանցիկն ասեն, թէ որովհետեւ եկաւ մեզ անկաւ անհնար է գնա քեզ տալն. բայց թէ դու կամիս մեր հաշտութիւնն սորայ տեղեքն իրան տաս: Եւ այս բանս երկարեցաւ մինչև երկու տարի. և եղև թվականն մեր ՌՃԿ. և թաղաւոր զօրաժողով արար և առաքեաց վէզիրն անդիւ զօրոք ի վերայ Մոսկովայ հանդերձ Շիվէտովն: Բայց այնպէս խոնարհութեամբ և վախով, որ Աստուած իւրեաց թեւ և զիկունք եղև. բայց նոքա հպարտութեամբ եկեալ համբաւելով թէ գնամք մեծ քաղաքն կ'առնուք: Քանզի ասէ իմաստունն տէր ամբարտաւանից հակառակ կայ և այլն: Այնչափ պարտեցան, որ մէկ

օրն տասն զալէ ետուն հանդերձ պատերազմի զնացող խառնովն ԼՁՌ. քէսէ այս յայտնի և համարձաք թաղաւորին, թող թէ անյայտ և ծածուկ վէզիրին և այլ նախարարաց և պարօնաց: Եւ Աստուծոյ ողորմութեամբն դուրս անկաւ ի սիրտն Օսմանցոց և արարին հաշտութիւն և արձակեցին զնոսա խաղաղութեամբ, տալով նոցա երեք օրվան զախրէ, զի բնաւ հատեալ էր Մոսկովու զախրէն. վասն այն պատճառով պարտեցան. թէ տեղն եկաց ժամն պատմեցից: Եւ թաղաւորն իմացաւ որ հաշտութիւն արարին և արձակեցին զնոսա խաղաղութեամբ: Բարկացաւ յոյժ ի վերայ եպարդոսին իւրոյ և այլ նախարարացն ասելով թէ մեղուն չսպառաց մեղըն ինչու առիք: Եւ թաղաւորին դէմն այլ ոչ կարացին զալ զայս հաշտութեան մէջի եղողքն: Ետոյ ընկան Մսրին թաղաւորին և նայ աղաչանօք փրկեաց զնոսայ յայնժամն, բայց ետոյ եսպան: Ով եղպարք իմ սիրելիք, ես ոչ մնամ թէ նոքա կորընչին. զիրայ այնչափ Փոսաթ անկաւ ի ձեռս սոցա, որ թէ մի հոգի ոչ կարէր փրկել և այնպէս արձակեցին զնոսա խաղաղութեամբ. բայց արարչին թողուք զիտել զայն: Եւ զիտելի է զայն Ժ. զալէն ասինք որ մի օրն առին բանիւ միայն ուխտ և դաշին արարին զայն ուխտն մինչև Ը. աճիսն կատարեցաւ և բերին բերդերու բաւանիսն հաշտութեան նամէով և ի գրի մէջ զայն ևս էին դրած թէ. այս պատերազմի պատճառն Ուլահ պէկին է որ զմեզ զիր է ուղղիւր ասելով թէ Օսմանցին անգոր է, գաս որ միաւորինք և երգեալ Ստամպոլն առնուք: Իրբև լուաւ թաղաւորն զբանս զայս, առ ժամայն գրեաց հրովարտաք Ուլահ պէկին. և բերեալ Գ. որդովք և Բ. փեսոքն հանդերձ կանամք և եղ ի բանտի. և առաքեաց այլ ևս Ֆէրման ընչիցն և սպրանացն: Եւ զայս կոստանդին պէկս ԻԳ. տարմանս: Եւ կանայք նոցա և թոռն մի Ը. որդոք. և կանայք նոցա և թոռն մի Ը. տարվան Բ. փեսայ հետ սուրկուն արարին մեր Քոթահիւս բերդին և նոքա եկեալ պատմեցին ստոյքս թէ մենք սէպէպ եղանք Մոսկովու զհարկն Օսմանցոցն առնեսնելու ճան-

պահնիս եկաւ մեր արածն այսպէս ստոյքն լուաք և զրեցաք և ապագայն Աստուծոյ է զիտելի և նմա փառք յաւիտեանս ամէն:

Ճառ: Ի թվին ՌՃԿԳ. ամին զարդեալ աստուածասաստ բարկութիւն ի վերայ Մոսկովի երկրոյ քանզի այս Մոսկովի երկիրն իԳ. բերդ է անուանիք և մայրաքաղաք սոցա կոչի Անապոլի որ առաջի ճառիս յիշեալ էաք: Ձի Օսմանցիք յոյժ տկարացեալ էին և նէմէն զօրացեալ էր ի վերայ Օսմանցոց և նէմէն զօրացեալ էր ի վերայ Մոսկովի երկրոյ Օսմանցիք տկարացան թոյլ ետուն. և զայս Մոսկովի երկիրս գտեալ ժամ թաւոյ եկեալ տիրեաց Վէնէտիկն թվին ՌՃԼԹ. ոչ թէ պատերազմաւ այլ անձնամտութեամբ: Եւ Տաճկաց բազումք ի միջոյ սոցայ եկեալք ցրուեցան երկիրն Օսմանցոց և այլք յուրվք Տաճկաց անդ մնացեալք զարման և եղև քրիստոնէայք. և շատ ուլամէք և կանանչաղլուք մկրտեցան. և ուսմիկք և զնոսա տեսանելով ամենքեան դարձան և եղև քրիստոնէայք և առնէին խնամութիւն ի միջի իւրեանց տալով զստերս իւրեանց յուստերաց քրիստոնէից և առնելով զստերս քրիստոնէից յուստերաց իւրեանց և այսպէս քրիստոնէից յուստերաց մէջի որպէս պատմէ ի հին Կոստանայց. և Աստուած ոչ ինայեաց գտածարն Սողոմոնի որ իւր անունն չինեալ էր և կործանեաց գնա ընդ ձեռամբ Նարթոթոնոսոսայ արքային Բարիլոնի: Այսպէս և զսոսայ ոչ ինայեաց և կործանեաց ընդ ձեռամբ Օսմանցոց. այնքան անձինս քրիստոնէից զձեռս սրով չարգեաց և զստընդեայս իսպառ կոտորեաց և զսոսայս և զաղջկունս և զմանկամարդս և զերիտասարդս զերեալ ցիր և ցան արարին: Բայց անօթից եկեղեցոյ զխաչ զշուրջաւ և զաւետարան և այլ զրեանք և հոլով սկեսոք զերալք ի ձեռաց անօրինաց ով կարէ գրով և լեզուաւ պատմել: Ահա գրեալ եմ ովկիանոս ծովին կաթիլ մի ըստ տկար մտաց իմոց զէտ քրիստոնէից և զարդասուս աջաց իմոց թափեալ ի կողմար այսպէս գրեալ եմ. որպէս առաջնոյն եզրի մարգարէին որ յայր անմարտ իսրայէլացոց ժողովուրդն պատմեցին ստոյքս թէ մենք սէպէպ եղանք Մոսկովու զհարկն Օսմանցոցն առնեսնելու ճան-